Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի « Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

   Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
   1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
   2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
   3. Հաստատության ղեկավարման իրավունքի/հավաստագրի/ պատճենը (բնօրինակի հետ),
   4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/ , որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
   5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ , կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, « Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 1-ին, ժամը 15:00-ին Գայի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գայ, Խաչատրյան 2:

Տեղեկությունների համար դիմել
Հեռախոս՝ 093-05-78-22
Էլ. փոստ՝ guidproc@mail.ru: